Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 94-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՕՐԵՆՔՈՎ ՉՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Սահմանել Մեղրի համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության վճար՝ ամսական 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հենասյան համար:

2. Սահմանել միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների՝ Մեղրի համայնքի ավտոկանգառներից օգտվելու համար ծառայության վճար՝ ամսական 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր ավտոմեքենայի համար:

3. Համայնքի վարչական տարածքում տարբեր միջոցառումների կազմակերպման նպատակով համայնքային սեփականություն համարվող մշակույթի տների, դահլիճների, ակումբների օգտագործման տրամադրման համար վճարը սահմանել՝

1)Ագարակի մշակույթի պալատի և Մեղրու մշակույթի տան դահլիճների համար՝ բարեգործական միջոցառումների անցկացման նպատակով 0 (զրո) ՀՀ դրամ, այլ միջոցառումների անցկացման նպատակով մեկ օրը՝ 30000 - 100000 (երեսուն հազարից մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Մեղրի և Ագարակ քաղաքներում գտնվող մյուս դահլիճների համար՝ բարեգործական միջոցառումների նպատակով՝ 0 (զրո) ՀՀ դրամ, այլ միջոցառումների անցկացման նպատակով մեկ օրը՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:
2)Գյուղական բնակավայրերի ակումբների դահլիճների համար՝ բարեգործական միջոցառումների անցկացման նպատակով 0 (զրո) ՀՀ դրամ, այլ միջոցառումների անցկացման նպատակով մեկ օրը՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

4. Սահմանել Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների օտարման և օգտագործման տրամադրման փաստաթղթերի (փաթեթի) կազմման, չափագրական և այլ նման աշխատանքների կատարման համար ծառայության վճար՝ 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:
5. Սահմանել Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման, օտարման կամ օգտագործման տրամադրման, չափագրական և այլ նման աշխատանքների կատարման համար ծառայության վճար՝

1) ավտոտնակների, այգետնակների, կրպակների, տաղավարների և այլ համանման շինությունների համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ.
2) բնակելի տների, տնտեսական և օժանդակ շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
3) հասարակական, արտադրական և այլ նշանակության շինությունների համար՝ 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

6. Սահմանել Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար՝

1) շինությունների համար՝

ա. ֆիզիկական անձանց համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ.
բ. իրավաբանական անձանց համար՝ 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ 300 (երեք հարյուր) ՀՀ դրամ:
2) Հողամասերի համար՝
ա. ֆիզիկական անձանց համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ,
բ. իրավաբանական անձանց համար՝ 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ:

7. Մեղրի համայնքի վարչական տարածքում տրանսպորտային ծառայությունից (միջբնակավայրային ուղևորափոխադրումներ) օգտվող մեկ ուղևորի համար համայնքի կողմից մատուցվող ծառայության դիմաց փոխհատուցման վճար ըստ երթուղիների՝ համաձայն հավելված 1-ի:
8. Համայնքային սեփականություն հանդիսացող MA3-551605-280-600 մոդելի բեռնատար ինքնաթափ ավտոմեքենայի ծառայություններից օգտվելու համար վճարը սահմանել՝ յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 10000 (տաս հազար) ՀՀ դրամ, վառելիքի ծախսը թողնելով պատվիրատուի վրա:
9. Համայնքային սեփականություն հանդիսացող JCB 3CX SiteMaster մոդելի բազմաֆունկցիոնալ անվավոր էքսկավատորի ծառայություններից օգտվելու համար վճարը սահմանել՝ առաջին մեկ ժամվա համար՝ 2000 (քսան հազար) ՀՀ դրամ, գումարած հաջորդող յուրաքանչյուր ժամվա համար՝ 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ, վառելիքի ծախսը թողնելով պատվիրատուի վրա:
10. Համայնքային սեփականություն հանդիսացող ITMGO285-2WD-75HPFARM, YOT X 804, SAMB-603, ՉԻՎԱՆ75-4 մակնիշների տրակտորների ծառայություններից օգտվելու համար վճարը սահմանել՝
    1) Գյուղատնտեսական հողատարածքներում հող վարելու համար՝ յուրաքանչյուր մեկ քառաքուսի մետրի համար 2 (երկու) ՀՀ դրամ, վառելիքի ծախսը թողնելով պատվիրատուի վրա:
    2) Խոտհարքներում խոտ հնձելու համար՝ յուրաքանչյուր մեկ քառաքուսի մետրի համար 3 (երեք) ՀՀ դրամ, վառելիքի ծախսը թողնելով պատվիրատուի վրա:
    3) Խոտհարքներում խոտ հավաքելու համար՝ յուրաքանչյուր մեկ քառաքուսի մետրի համար 2 (երկու) ՀՀ դրամ, վառելիքի ծախսը թողնելով պատվիրատուի վրա:
    4) Գյուղատնտեսական հողատարածքներում ցանք կատարելու համար յուրաքանչյուր մեկ քառաքուսի մետրի համար 1 (մեկ) ՀՀ դրամ, վառելիքի ծախսը թողնելով պատվիրատուի վրա:
    5) Համայնքային տեխնիկայի ծառայություններից օգտվելու աշխատաժամանակը սահմանվում է 09:00-ից մինչև 18:00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՉԱՔԱՐՅԱՆ